8. ՄԱՋՐՈՒՄ ԽՈՋԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակոց կէղնի չի էղնի մեկ հղոր թագավորըմ։ Էդ թագավորը ժառանդ չի ունենա։ Զօր ու գիշեր էդ որդի չունենալու համար կը մտածե։ Մեկ օրըմ իրան խաս բաղչի մառմառ հավուզի քովը ման դալած ժամանակը հանկարծ կէրևա մեկ Նուտեյի Դարվեշմ ու կըսե թագավորին.

— Ընչի՞ այդքան շատ կմտածես։

Թաղավորը կըսե.— Ես չմտածեմ, ո՞վ մտածե։ Իմ անցմանես ետև մեկ ժառանդմ չունիմ օր ժողովուրդս կառավարե։

Էդտեղ Դարվեշը կըսե.— Թագավորն ապրած կենա, ես օր քեղի տարիմ էլ էս վախտ էրկու տղա տամ, մեկն ընձի կուտա՞ս։

Թաղավորը խոստացավ, որ կուտա։ Այն ժամանակ Դարվեշը հանեց մեկ խնձորմ թաղավորին տվավ ու ըսավ.

— Տա՛ր, կեսը դու կեր, կեսը թագուհին։ Աստծու հրամանովը ձեզի երկու տղա կէղնի, միմիայն, մինչև ես չգամ տղոց անուններ չղնեք։

Ըսավ ու անհայտացավ։

Թագավորը ուրախ գնաց տուն։ Ինչպես որ Դարվեշը պատվիրել էր՝ կեսը ինքը կերավ, կեսը թագուհին։

Ժամանակը լըրացավ ու թագավորին երկու տղա էղավ։ Այն ժամանցավ մեկ քանիմ օր, սպասեցին Դարվեշին՝ չէկավ. վազիր նազիրն ու բոլոր իշխանները ասացին, որ այս տղեքն խո առանց անուն մնալու չեն։

Թագավորն ասաց.— Դարվեշը ինքը պտի գա, որ անուն գնեք։

Իսկ սինոդը ասաց.— Իցե թե Դարվեշին մեկ վտանգմ պատահեց, էլ չի գա, բերեք ռունտիկ անուն դնե։

Թագավորը համոզվավ իդոնց խոսքին, պատրաստություն տեսավ, մարդիկ կանչեց անուն դնելու, որն ասավ՝ Սուլեյման դնենք, որն էլ թե՝ Ջումշուտ, վերջապես ամենքը մեկ բան էին ասում, հանկարծ Նուռեյի Դարվեշը ներս մտավ ու ասավ.

— Թագավորն ապրած կենա, մեկի անունը՝ Ահմատ, մեկելինը՝ Մահմատ,— ու աներևույթացավ։

Թագավորի տղեքը մեծացան, ուսումնարան գնացին, եղան տասնըչորս տարեկան, ուսումները շարունակում էին։

Մեկ օր էլ էլի թագավորը խաս բաղչեն ման գալած ժամանակը էլի Դարվեշը էկավ, երևաց թագավորին.

— Հա՛,— ասավ,— թագավորն ապրած կենա, խոսքիդ տե՞րն ես, տղոնց մեկը պտի տանիմ։

Թագավորն ասավ.— Խոստացել եմ, ինքար չեմ էնե, տա՛ր որը կամենաս։

Դարվեշը ասավ.— Մահմատը քեզի, Ահմատը ընձի։

Թագավորն էլ ասավ.— Գնա՛, որդի, այս մարդու հետ։

Ահմատը համբուրեց հորն ու մոր ձեռքը ու ընկավ Դարվեշի հետևեն գնաց։ Դարվեշը գնաց, շատ ու քիչն աստված գիտե, հասավ մեկ ձորիմ քով. դարվեշը ճանփեն փոխեց ու գնաց դեպի ձորն վեր, ձորեն վեր գնալուս մեկ քարափիմ պատահան ու տակը կայնան ու սկսեց Ահմատին խրատ տալ թե.

— Որդի, արի, ինչ որ քեզ պտի ասեմ, հիմիկունց ասեմ, որ հետև չի խոսվի, իմ թլիսմս բոզմիշ կէղնի, ես գիրս կառնիմ գելնիմ էս քարափի գլուխը, կ'կարդամ մինչև երեք օր, երեք օրվանեն հետև էս քարափի միշին մեկ դուռմ կբացվի, դու էդ գռնեն ներս կմտնիս ու կտեսնիս, որ էդ մաղարի մեջ արծաթ փողը մեկ կողմը կիտած, փախր փողը՝ մեկ կողմը, օսկին դռան ետևը ահագին կիտած, ոչ մեկին աչք չես դարցնե, միայն ոսկու թեջի գլուխը մեկ ժանգոտ, կեղտոտ շամտանմ կէղնի՝ տակը թասի պես, այդ կվերցնես, օսկուց ու արծաթեն մեկ հատմ է չես վերցնե, թե չէ, ես էլ տակը կմնամ, դու էլ։ Միայն շամտանը կառնիս ու դուրս դուքաս։

Ասավ ու առավ գիրքը, գնաց քարափի գլուխը կարդալու։

Տղեն մնաց քարափի տակը, Դարվեշը երեք օր կարդաց, երեք օրեն հետև քարափը շխրտալեն ետ դնաց, ու մեկ դուռմ բացվավ. Դարվեշը գլխով էրավ տղին, տղեն ներս մտավ, ու տեսավ, որ ինչ

որ Դարվեշը ասել էր այնպես էլ ամեն ինչ տեսավ։ Տղեն տեսավ որ շամտանը ոսկու թեջի դլխուն՝ ելավ, ոսկու վրեցեն վեր առավ շամտանը, իջավ, միտքը շփոթվավ թե. «էս ոսկուց մի քանի բուռ վերցնես ու շուտով դուրս դամ», ջերը լցրավ մի երկու բուռ, դուրս թռավ, քարափը իրար եկավ, փեշերը մնաց քարափի տակը, իրան վնաս չեղավ, փեշերը կտրեց, դուրս ելավ՝ տեսավ Դարվեշը չկա։ Ելավ քարափի դլուխը, տեսավ որ քարափի միշեն Դարվեշի ձենը խորունկեն դուքա։ Ահմատը, քանի որ Դարվեշի ձենը դուքար, մնաց որ դուրս ելնի, բայց դուր, երեք օրից հետև ձենը կըտրվավ, ինքն իրան ըսավ որ՝ էլ էստեղ մնալս ավելնորդ է։ Ընկավ մեկ նեղ ճանփա ու դնաց, դնաց շատ ու քիչը աստված դիտե, պատահավ մեկ չորանիմ ու ըսավ.— Չորան ախպեր, ես շատ անոթի եմ, ինձ մեկ կտոր հաց տուր ուտեմ։

Չորանն էլ ըսավ.— Շատ լավ կէղնի Ահմատ աղա, քեղ հաց էլ կուտամ, կաթ էլ կթեմ կեր ու կշտացի, ուր էլ որ կէրթաս աստված բանդ աջողի։

Չորանը խոսքը կատարեց, կշտացրավ, Ահմատը հանեց իրեք ոսկի տվավ, չորանը շառավ թե.— Իմ վարցքս չեմ կորցնի, դու ջահել տղա ես, տար քեղի պետք դուքա։

Ահմատը շնորհտկալություն տվավ չորանին ու ըսավ թե.— Ընձի մեկ ճանփեմ ցույց տուր, որ ես էրթամ շելնիկ ընկնիմ։

Չորանը ցույց տվավ թե.— Այս ճանփով դնա, մեծ սարն անցար, էն քովը Սպահան քաղաքն է։

Նա էլ ելավ ու դնաց, դնաց, շատ ու քիչն աստված դիտե, հասավ այդ քաղաքը։ Մութը ընկել էր, դնաց մեկ խանմ, կանչեց օդարաշուն թե.— Ինձի մեկ օթախ տուր։

Նա էլ տվավ։ Ահմատը հանեց հինդ ոսկի տվեց ու ըսավ.— Դնա, ընձի մեկ դաթ յաթաղ բե, դիշերվա մոմ բե, կերակուր բեր։

Օդարաշին կատարեց բոլոր հրամանը. Ահմատը դնաց նստեց օդեն, հաց կերավ։ Մութը որ ընկավ, մոմը վառեց՝ մնաց ձեռը բըռնած, վեր դրավ դետինը՝ չկայնավ, պատին զարկեց՝ հալավ թափավ, հանկարծ միտքը ընկավ կեղտոտ շամտանը, հանեց ջեբեն, մոմը դարկեց շամտանի վրա ու վեր ղրտվ։ Մեկ էլ քիչ մնաց, տեսավ շամտանը ժաժ էկավ։ Ըսավ. «Իցե թե տեղը դուզ չէր», ուզեցավ տեղը փոխել, վերցրեց, մեկ էլ ի՞նչ տեսավ, տեսավ որ շամտանի տակի թասի տեղը լիքը ոսկի է լցվե, զարմացավ թե՝ էս ոսկին որդից էդոր վրա, մտածեր կը, տեսավ շամտանը էլի խաղցավ, նորեն վերցրեց, տեսավ որ էլի ոսկի է տակը։

Նոր գլխու ընկավ, որ մարիֆաթը ժանգոտ շամտանին էր, որ այնքան ոսկի էր գիզվել. էգ շամտանը ուր էլ որ տանին վառեն՝ ոսկին կքաշե բերե, թլիսմը էգ շամտանի մեջն է եղել։ Ահմատը նոր փոշմանեց, որ. «Ես իմ Դարվեշս անտեղի տեղը կորցրի, նա գիտեր որ ինձ պատվիրեց, որ «մենակ շամտանը վերցրու», բայց ես սխալվա, էլ ի՞նչ անեմ, չարա չկա»։

Առավոտը որ լուսացավ, օգաբաշուն փող տվավ թե.— Ընձի երեք հատ սնդուկ բեր։

Նա էլ բերավ, հետո Ահմատը վառեց մոմը, զարկեց շամտանի վրա ու սկսեց շուտ-շուտ փոխել։ Քանի կփոխեր, ոսկին շամտանի տակը կը լցվիր։ Այնուհետև սկսեց դրանով պարապելը, այնքան շամտանը փոխփոխեց մինչև օր երեք սնդուկն էլ լիքը լցվեց։ Այդտեղ մնաց երեք ամիս։ Մեկ օր դուսը կայնած էր, տեսավ, որ շատ շելնիկ կէրթան իրար ետևե, կանչեց օգաբաշուն ու ըսավ թե.— Էս շելնիկը ո՞ւր կէրթան։

Նա ասաց.— Ահմատ աղա, դու այսքան վախտ այստեղ ես բա հլա չե՞ս իմացել։

Նա թե.— Չէ։

Օգաբաշին ըսավ թե.— Այստեղ մեկ Դունյագոզալիմ կա, ինչքան որ թագավորներ, իշխաններեր տղեք կան եկան տեսության, բոլոր փողերը ծախսեցին ու ախքատացած ետ դարցան նրա համար, որ 100 ոսկի տվողին մեկ ձեռքը կտեսցնե, իսկ 1000 ոսկի տվողին երեսը կտեսցնե ու ետ կքաշե։

Ահմատը մտքի մեջն ըսավ. «Սա իմ գործս է»։

Մյուս օրը ելավ գնաց Դունյագոզալու քովը։ Դունյագոզալը բալկոնի վրեն է, ով որ կէրթար տեսնելու՝ ցածը կկանգնիր։

Ահմատը ճվաց.— Դունյագոզալի դուս արի, երեսդ տեսնիմ։

— Հազար ոսկի է, կարո՞ղ ես տալ։

Նա ասաց.— Երկու հազար էլ կուտամ։

Դունյագոզալին գլուխը դուրս հանեց։ Ահմատ աղեն տեսնելուն պես խելքը գլխիցը թռավ։ Դունյագոզալին ջահիքը զարկեց, որ ուշքի բերեն ու ասեն՝ ելի գնա քու տունդ։ Նա էլ ուշաթափված գնաց յուր տունը։ Մյուս օր գիշերհանա վեր ելավ ու գնաց Դունյագոզալու սիրով վառված նրա մոտը, էլի ճվաց.

— Դունյագոզալի դուս արի։

Դունյագոզալին դուս եկավ, առավ ոսկիքը ու գնաց։

Ահմատը էդպես շարունակեց միշտ էրթալ ու դալ Դունյագոզալու մոտը։ Մեկ օր էլ էրթալուս նա վերև կանչեց ու ըսավ.— Այ տղա,

Հերիք չէղավ, խեղճ ես, մեղք ես, քա՞նի թագավորների ու իշխանների տղա եկան ախքատացան ու ետ գնացին, ես զարմանում եմ, թե քու փողդ անհատնելի է, ինչ է, ղնա, խեղճ ես, մեղք ես, հեռացի ինձնեն։

Ահմատը ասավ.— Դունյադոզալի, ես քու վրադ սիրահարվել եմ, աշխարք աշխարքով անցնի, ես քեզնեն չեմ անցնի, պտի քեզի առնիմ որ առնիմ։

Իսկ Դունյադոզալին ասավ որ.— Եթե աշխարք անցնի ու ես ու դու մնանք, քեզի չեմ առնի, ղնա դլխուդ ճարը տես։

Ահմատը ասավ.— Ես քու թարկդ չեմ տա։

Նա ասավ.— Որ այդպես է, քեզի մեկ տեղմ կդրկեմ, թե որ ղնտցիր ու էդ ասածիս պատասխանը բերեցիր, էն է որ՝ կառնեմ, թե չէ՝ հո չէ։

Ահմատը ելավ ղնաց իրան տեղը։ Դունյադոզալին ասավ մըտքում. «Էնավաշ քեզի էնդես մեկ տեղմ դրկեմ, որ էրթաս ու ետ չդասս։

Ահմատը լուսարացին ելավ գնաց Դունյադոզալի մոտը, թե ուրտեղ պտի դրկեն։

Դունյադոզալին ասավ թե.— Կէրթաս Գավուր Իզմիրա քաղաքը Սուլեյման աղի տունը ու զիմանաս, թե ինչն է պատճառ, որ մեր դրռ մատիանմ ունի դարու տեղ չախմախ քարն են լցնում՝ ուտում է դոփ դուի. էդ չախմախ քարը դոփ դուի ուտելու պատճառը իմացի ու արի՝ քեզի առնիմ։

Ահմատ աղեն ելավ գնաց օղարաշու մոտ, կանչեց թե.— Էս քաղաքի մեջ լավ ձի ո՞վ ունի, գնա՛, ինչ որ զուզեն տուր բե՛ր։

Գնաց մեկ լավ ձիմ առավ եկավ։

Նա ասավ.— Ձին պատրաստե տեղ պտի էրթամ։ Հեծավ ձին, օղարաշուն ասավ.

— Լավ մուղաթ կկենաս օթախիս,— ու շարունակեց իր ճանփան գնաց։ Գնաց մինչև Գավուր Իզմիր քաղաքը, հարցրեց Սուլեյմոն աղի տունը, գտավ ու գնաց այնտեղ, հարցրավ թե՝ Սուլեյման աղեն որտե՞ղ է, ասին որ՝ գնացել է Ստանբոլ։

— Ե՞րբ է գնացե,— հարցրեց։

Ասին.— Երեկ ղնացել է, էսօր դուքա։

Ահմատն ասավ թե.— Ինչպե՞ս կարելի է մեկ ամսվա ճանփեն այդպես շուտ դա։

— Էնոր ձին դուքա։

Մեկ էլ աշեցին, մե թոզ ու դումման ելավ սարի գլոխը, ծառաներն ըսին.— Տիյա, էկավ մեր աղեն։

Մինչև երկու խոսք խոսացին, եկավ իջավ։ Ձին ներս քաշեցին, ծառաները չախմախ քարը բերին լցրին Ծաղագը։ Ահմատ աղեն աչքովը տեսավ, որ հաստատ չախմախ քարը գարու տեղ կուտե։ Հարց ու բարև արին իրար հետ ու գնացին տուն, նստան։ Ծառաներին հրամայեց, որ հաց բերեն ուտեն, ճանփուց եկած, բեզարած են։ Նրանք շուտով սեղանը պատրաստեցին, Սուլեյման աղեն հրավիրեց Ահմատ աղին հաց ուտելու։

Ահմատ աղեն ըսավ.— Ես քեզնեն մեկ խնդիրմ ունիմ, թե կկատարես հացդ կուտեմ, թե չէ՝ հո չէ։

Էդ մարդն էլ ըսավ. «Ջանմ, ինչ խնդիր պետք է լինի, իմացել է, որ լավ ձի ունիմ, տեղ պտի էրթա, հեծնի, կամ ինձ պտի ղրկե, կէրթամ» ու ըսավ—Կկատարեմ բաղձանքդ։

Հետո միասին հաց կերան վերջացրին, քիչ խոսելուց հետո Սուլեյման աղեն ըսավ.— Ըսա տեսնիմ ի՞նչ է խնդիրդ։

Նա ասաց.— Իմ խնդիրս այս է, որ քո այս ձիուդ չախմախ քար ուտելու պատճառը ի՞նչ է։

Էդտեղ Սուլեյման աղի հերսը ելավ, ըսավ.— Հեյ վա՜խ. հեյ վա՜խ, ես գիտենայի, որ դուն էդ պտի հարցնեիր ինձի, էն վախտը, որ ես ձիուցս իշա, քեզի մեկ թուրմ կզարկեի մեջտեղդ կէնեի երկու կտոր, դու էլ կպրծնեիր, իմ էլ հին դարդերս առաջ չէր գա. յարեքս նորեն չէի թաժացնե, համա, որ երթում եմ կերե, պտի ըսեմ, դե՜հ, ականջ արա Ահմատ աղա, ըսեմ.

— Ես մեկ կնիկ ունեի, էդ կինս շատ նաղուկ էր, կըսեր՝ տեղս չոր է,— կբերեի մեկ բմբլե դոշակմ է կէվելցնեի, էլի չէր էղնի. ինչ որ ըսեր անկաջ կէնեի։ Էղավ որ մեկ օրմ ինձի պատվի կանչեցին, կնկաս ըսի որ՝ քելե էրթանք, ըսավ. «քեֆ չունիմ», ես ելա մենակ գնացի։ Մինչև կես գիշեր կերանք, խմեցինք, քեֆերս չաղացավ՝ բոլորս էլ ցրվանք իրանց տները։ Ես գնացի առաջ ձիանոցս տեսնելու, ձիանոցս պահապան մեկ արաբմ ունեի։ Գնացի ներս ի՞նչ տեսնիմ, էդ իմ նազլի, օխտը զատ բմբլե յորղան դոշկի մեջ քնող կնիկս, որ ասում էր. «Չոր է, կոխքերս ցավի կը», արաբի հետ ձիանոցի չոր տախտի վրա այնպես փաթվե քնել էին անուշ, որ ջուրն արանքներեն չէր անցնի։ Ես էլ տեսա, բինիշս հանի վրեները գցի, որ գիտենան ես տեսել եմ, ուրիշ պատճառ չբռնեն, ու գնացի օթախս քնելու։ Առավոտ լուսացավ, քնես ելա, վայ էն քնելուն որ ես քնա, մեկե տեսա կինս դեպի ինձ գուքա, ինձ ու ինձ ըսի՝ դիտե որ տեսել եմ, դա-

յիս է ոտներս ընկի, ներեզություն խնդրե։ Մեկ էլ մոտեցավ ինձ, մեկ պղտի չիբուղմ թլսմի հանեց, զարկեց ընձի ու ըսավ. «Սուլեյման աղա՛, էղնիս մեկ ղաղարմ՝ ընկնիս ուլիցները», զարկելու պես էղա մեկ ղաղարմ ու ընկա դուս. էն մեծ քոփաք շներ ընձի վերցնեին զարկեին կը դետին՝ կիսախեխտ վեր կը գցեին։ Արի տես որ մարդկային խելքը վրես է էլի, տո ես ինչ էնե՞մ, ինչ չէնե՞մ, որ ես էս շների ձեռքերեն ազատվիմ, վազեցի ինձի գցեցի կարդցնող խոշի տունը, մտա էդոնց վառելիքի փեստերի արանքը, որ շվաքի մեջը դարսած էր։ Մութն ընկավ, իրիկունը խոշես տուն էկավ, խոշես էլ ուներ մե հասած աղջիկ, իրիկունը, որ հացը կերան պրծան, քնելու ժամանակ աղջկան ըսավ. «Ճրագն առ, էրթանք դոները փակենք դոնը»։ Ճրագն օր առան դուրս էկան շոխքը ընկավ տախտակների ղատը, իմ աչքերս պլպլաց, խոշես տեսավ. «Աղջի, էս ո՞վ բերավ էս անտերը, փեստմ բեր դուս անենք»։ Փնտով ինձ զարկեցին, ահուս դուս չէի դա, թե էլի շները ընձի կդզեն, վերջը հանեցին, փաթվա խոշիս ոտները։ Աղջիկը ըսավ օր. «Էսոր աչքերը լըմանի մեր Սուլեյման աղի աչքերը», իսկ խոշեն բարկացավ թե՝ անիրավ դու ինչպես ես նրան այս դաղարին նմանեցնում։ Աղջկա վրա հերսոտավ ու դնաց քնելու. աղջիկը ղաղարը վերցրավ ու տարավ գրավ իրան տնլը ու ինքը գնաց Սուլեյման աղի կնկա քովեն թլսմի չիբուղը բերավ (նա դիտելը օր թլսմու չիբուղ ունին նրանք) զարկեց զազարին ու ըսավ. «Էլի Սուլեյման աղեն էղնիս», ու դարձավ մարդու կերպարանք, տղջիկն էլ թլսմի չիբուղը տվավ Սուլեյման աղին ու ըսավ՝ տար ինչ որ դուղես արա կնկագ։ Էդ էլ չիբուղն առավ գնաց, տեսավ օր էլի արաբի հետ փաթվե քնել են, մտածեց թե՝ ես էսոնց ինչ էնեմ, չիբուխը զարկեց արաբին ըսավ. «Դու էղնիս մեկ սև էշմ», կնկան էլ մեկ ձիմ էրավ, որ մնա իրա մոտը։ Էդ էշը անտեր էշ էր, ով էղներ կբանցներ. ձիուն էլ ես գարի ու դարմնի տեղ շամշով ու լաբլարով կպահեի, թե ինչ է, էլի իմ ամակտարս է։

Մեկ օրմ նոքարներն էկան, թե ձին եմ չի ուտե, աչքերեն արտսուք կթափե։ Նոքարներին ըսի, որ՝ գնացեք տեսեք էն էշը որտեղ է, գնացին տեսան, որ էշը սատկել է. շոր գլոխը առան եկան դրին ձիու քովը, ձին որ իշու գլոխը տեսավ սկսեց պատի քարերը կրծել, նոր իմացա, որ էս թերմաշը էդ իշու սուքն է պահում, արթղ սկսեցի շախմախ քարը լցնել հ՚աղաքը, քանի նոքարները իշու շոր քյալին ծեծեին, նա ավելի հերսոտ կուտեր քարը։ Ահա էս է քար ուտելու պատճառը։ Գնա, քեզ ղրկողին տար խաբար։

Ելավ Ահմատ աղեն ձին հեծավ, մնաս բարև արավ ու ընկավ

ճանփա։ Դունյագողալի քաղաքը եկավ հասավ, ձին տվավ օդաբաշուն ու ինքը գնաց Դունյագողալու մոտ՝ բարև, աստծու բարև։ Դունյագողալին ըսավ մտքում՝ ինչպես էղավ, որ նորից ետ եկավ, ըսավ.

— Դեհ, պատմիր տեսնեմ, ինչպես էղավ։

Նա էլ պատմեց այնպես, ինչպես որ Սուլեյման աղեն պատմել էր իրան։ Հետո Դունյագողալին ըսավ.

— Լա՛վ, իմացար։ Սուլեյման աղի կնիկը իրան ի՞նչ կնկութեն էրավ, որ ես քեզի առնեմ ինչ կնկութեն էնեմ, գնա՛, վախտով գըլխուգ ճարը տես։

Ահմատն ըսավ.— Անհնար է, ես քեզի պտի առնիմ։

Դունյագողալին ինչ որ խոսաց, տղեն չհամոզվավ։

Հետո ըսավ.— Քեզի մեկ տեղմ էլ կղրկեմ, թե որ պատասխանը բերիր՝ կառնեմ։ Նրա միտքն այն էր, որ այնպես տեղ ուղարկեր՝ էրթար ու ետ չգար։

Դունյագողալին ըսավ թե.— Որ կ'էրթաս Ղայսարի քաղաքը, էնտեղ մեկ Մաջրում խոջա կա, նա որ գելնի մինարի գլուխը ազան տալու կըսե,—օխա՜յ, օխա՜յ ահան եկան։—Ազանը կուտա կպրծնի՝ իջնելու վախտը ախ ու վախ էնելով, գլխուն, ծնկներուն զարկելով գիջնի. գնա՛, էդ ախ ու վախի ու ուրախանալու պատճառը իմացի, արի ես քեզի կառնիմ։

Տղեն ելավ, մնաս բարով ասավ ու գնաց, ձին նստավ ու գնաց Ղայսարու քաղաքը, գնաց Մաջրում խոջի տունը ղոնախ էղավ։ Խոջեն էսոր գնալու վախտը կէրթար դեպի մինարեն, որ ազան տա։ Ահմատը գնաց ականջ անելու մոլլի ազանին, տեսավ օր հաստատ ելնելու վախտը «օխա՜յ, օխա՜յ ահան եկան» ըսավ, ու իջնելու վախտն էլ՝ «վա՜յ, վա՜յ», ծնկներուն ու գլխուն զարկելով իջավ, դեպ իրան տունը դնաց։ Ահմատն էլ հետը։ Խոջեն իմացավ, որ իրան ղոնախն է, հարց ու բարև արավ, քիչ նստելուց հետո հրամայեց հաց բերել։ Սեղանը պատրաստեցին, խոջեն հրամայեց ղոնախին հաց ուտելու, Ահմատը ըսավ.— Ես քեզնեն մե խնդիրմ ունիմ, թե կը կատարես՝ հացդ կուտեմ, թե ոչ՝ գելնիմ կէրթամ։

Խոջեն մտածեց. «էսոր խնդիրը էն պտի էղնի հալբաթ, որ աղջըկա վրա սիրահարված է, գիր էնել պտի տա» ու ասաց.— Շատ լավ կէղնի, կկատարեմ։

Ահմատը մոտ էկավ, հաց կերան պրծան, քիչ խորաթելուց հետո խոջեն ըսավ.— Ի՞նչ է խնդիրդ, ասա տեսնեմ։

Ահմատը ըսավ.— Դու ինձի ըսա, թե ինչ էր պատճառը, որ մինարի գլուխն ելար ազան տալու, ասիր «օխա՜յ, օխա՜յ էկան», ու

իջնելուս՝ «վա՜յ, վա՜յ» անելով գլխուդ ու ծնկներուդ զարկելով իշար, էդոր պատճառը խնդրեմ ինձի ըսես։

Էդտեղ Մաշրում խոջեն մեկ խոր ա՜խ քաշեց ու ըսավ.

— Ես որ իմանայի դու էդ պետք է հարցնեիր, տուն գալու պես կը զարկեի կսպանեի քեզ ու իմ հին դարդերս չէիր թաժացնե, միայն կարդացող մարդ եմ, որ երդում եմ կերե՝ պտի ասեմ, դեհ, ականջ արա Ահմատ աղա.

— Ես Մաշրում խոջեն էի, ինչ վախտ որ կելնեի մինարեն աղան տալու էնքան քաղցր ձեն ունեի, որ ամեն երկրներե մարդիկ գուքային իմ ձենս լսելու, էնքան որ քաղցր էր։ Ավուր մեկը աղան տվածս տեղը երեք աղունիկ եկան ընձի մինարի գլխեն առան տարան, տարան Հուրի փարի թագավորի քովը, այնտեղ ինձ գրին թագավորի մոտ, թագավորը ինձ հետ խոսաց թե.—Մաշրում խոջա, էս ի՞նչ է քո էրածդ, իմ պզտի աղջիկս քո ձենիդ քաղցրության վրա մայիլ է եղել ու քեզ վրա սիրահարվել է, թե. «Ես Մաշրում խոջին կառնիմ», դեհ հիմի դու էլ իմ աղջկաս կառնի՞ս թե չէ։

Խոջեն ըսավ.— Կանչե աղջիկդ տեսնիմ։

Բերել տվավ աղջիկները ու ըսավ. «Կտեսնիս էս աղջիկները, սրանք այն աղունիկներն են, որ քեզի մինարի գլխուցը բերին։ Երկու մեծերս այստեղ կարգել եմ, իսկ այն ցածի կայնողը փոքր աղջիկս է, որը գուզե քեզ առնել»։

Ես էլ տեսա Հուրի փարի թագավորի գեղեցիկ աղջիկը ու ասի՝ որ տաս ինչի՞ չեմ առնի։

Նա ինձի էս պատասխանը տվեց թե. «Դու հողածին ես, իսկ մենք հուրի փարի, մեր մեջը սովորություն չկա ա՜խ ու վա՜խ էնելու, թե որ դու էլ կարող ես առանց ախ ու վախ էնելու մնա, էն է, որ կուտամ, թե չէ որ ախ ու վախ էրիր՝ քեզի նորեն կտանին քո տեղդ, դու այնտեղ կմնաս վառվելեն, իմ աղջիկս էլ՝ այստեղ»։

Ես թե՝ չեմ էնե։ Բերավ աղջիկը պսակեց ինձի հետ։ Մնացինք երեք չորս տարի, մեզի երկու երեխա էղավ։ Ավուր մեկը հայրենիքս միտքս ընկավ, մեկ ա՜խմ քաշեցի։ Էկան աղջկները ինձի տարան թագավորի մոտ թե. «Իսան օղլին ա՜խ քաշեց»։

Թագավորն ինձի ըսավ. «Այ տղա, ես քեզի չըսի թե ախ չպտի քաշես»։

Ես էլ ըսի.— Թագավորն ապրած կենա հայրենիքս միտքս ընկավ, սխալվա, ախ քաշի։

Թագավորն ըսավ.—Առաջի անգամն է, կներեմ. քեզի որ ղըրկեմ քո հայրենիքդ սրդգ խո մարդու չե՞ս ըսե, թե որ մարդու սրդդ

ըսիր էլ քեզի էնտեղեն չենք բերե, գու էնտեղ կմնաս վառվելեն, իմ աղջիկս՝ այստեղ։

Ես էլ խոստացա, որ չեմ ըսե։

Հրամայեց էն աղջիկներին, էլի աղունիկի լեզաբը մտան ու տաբան խոշին մինարի գլուխը դրին էկան։ Առավոտվա ազանի ժամանակն էր, սկսեցի ազան տալ, բոլորը դուքանները փակեցին ու էկան թե Մաշրում խոշեն եկել է։

Երբ որ ազանեն պրծա իշա ցած, բոլորը էկան բոլորս փաթթեցին, հարց ու բարև էրին, թե մինչև հիմի դու որտեղ էիր։ Ամեն մեկին մեկ բանովմ խաբեցի, հաստատ տեղս չասեցի։

Մնացի մեկ ժամանակ, ամիսս լրանալով էր, մեկ օրմ իմ կարդըցնող խոշես ձիում վրա մեկ խուրջին գիրք լցած եկավ իմ մոտս, կանչեց ինձի առանձին ու երդում տալ տվավ թե. «Դու էղնիս էս գրիանքը, թե դուզը չըսես քեզ պատժեն, դու էղնիս ստեղծողդ, իմ ամակս քեզի քոռացնի, թե որ դուզը չըսես, թե որտեղ էիր էս չորս տարին»։ Ինձ էլ խոշիս երդումը շատ սարսափեցրեց ու դրուատն ասեցի՝ որտեղ որ էի։

Երբ որ ամիսս լրացավ, ելա մինարի գլուխը, որ գան ինձի տանին։ Ելածս վախտը իմ կնիկս ու երեխեքս էկան, ասի որ ինձի կտանին, ըսի. «Օխա՜յ էկան, օխա՜յ էկան»։ Ազանս տվի պրծա, նշանածս երեխանց հետ եկավ մոտեցավ ինձի ու ըսավ.— Տո, բերախտ հողածին, այս ինչ բան էր դու էրիր, ինչո՞ւ ղու քու սրդ ըսիր, հիմի ես իմ էլու գյունիս քով սևերես էղա, թե. «Դու հողածինի վրա սիրահարվար, նա էլ սրդը ուրիշին ասեց», հիմի ինձ էլ իրանց մեջը չեն թողնի, քեզ չեն տանի, դու էդտեղ կմնաս վառվելով,— ըսավ ու երեխանց գլխուն ծեծելով, ծեծելով առավ գնաց, ու ես էլ, ա՜խ ու վա՜խ էնելով, գլխուս ու ծնկներուս զարկելով իշա ցած։ Ահա այս է պատճառը այս բանի, գնա, քեզ ով որ ղրկել է, պատասխանը տար։

Ահմատը հեծավ ձին ու ընկավ ճանփա դեպի իրանց երկիրը։ Գնաց հասավ Դունյագոզալու քովը ու պատմեց այնպես, ինչպես որ իմացել էր։

Դունյագոզալին ըսավ.— Հուրի փարին Մաշրում խոշին առավ ի՞նչ կնկություն արավ, որ գու ինձի առնես ինչ կնկություն անեմ,— ու մտքումը ասեց՝ սպասիր, այս անգամ այնպես տեղ ղրկեմ, որ էրթաս ու ետ չգաս։

Ահմատը ըսավ.— Հիմի կառնի՞ս ընձի, քո պատճառներեդ խոպրծա։

Դունյագոզալին ըսավ.— Շարտը երեքիցն է այս անգամին էլ մեկ տեղմ կղրկեմ, թե որ գնացիր ու պատասխանը բերիր էն է որ կառնիմ, թե չէ՝ ես էլ կպրծնիմ, գու էլ։ Այս անգամին էլ կէրթաս Ղարսա քաղաքը, այնտեղ մեկ Ղլտճիմ կա (լավ թուր շինող), նա որ թուրը շինե պրծնի կը, փողը կառնի ու թուրը կուտա տիրոջը, հետո նորեն թուրը ետ գուզե, երեսին կաշե ու զարկե կը օրսին՝ ջարդ ու փշուր կէնե. գնա էդոր պատճառն էլ իմացիր ու արի՝ նոր քեզի կառնիմ։

Ահմատը մնաս բարով արավ, ձին սարքեց ու ընկավ ճանփա։

Դունյագոզալին մտքում ասեց. «Այս անգամ այնպես տեղ ղրրկի, որ թե ետ էկար, պարզենցիր»։

Ահմատը գնաց հասավ Ղարս, հարցրեց Ղլտճու տունը և գնաց գտավ։ Այն տեղը հասավ, որ թուրը շինել պրծել տիրոջը կուտար, հանկարծ թուրը ետ ուզեց, որ նորեն տեսնի, այնպես լավ ու ջուհարդար թուր էր, որ կասես թե ջուհարը վրեցեն կաթեր կը, ետ ուզեց, երեսին աշեց ու զարկեց օրսին՝ էրավ կտոր, կտոր։

Մուշտարին թե.—Ախպեր, ես որ հավանել էի, դու ինչի՞ կոտրեցիր։

Վարպետն ըսավ.— Ահան քու փողերդ, ի՞նչ վնաս ունեցար, մեջ տեղը իմ աշխատանքս գնաց։

Մուշտարին գնաց, Ղըլտճին նոր հարց ու բարև արավ Ահմատի հետ, հրավիրեց տուն։ Գնացին ճաշի սեղանը պատրաստեցին, ասավ.— Համեցեք, հաց ուտենք։

Ահմատն ըսավ.— Ես քեզնեն մեկ մունաթմ ունիմ, թե կկատարես՝ հացդ կուտեմ, որ հեռու տեղե եկել եմ մաղսուս իմանալու։

Ղըլտճին էլ մտածեց թե. «Հալբատ, լավ թուր շինող եմ, իմացել է, եկել է մոտս, մեկ թուրմ կշինեմ կուտամ էրթա» ու ըսավ.— Կկատարեմ բաղձանքդ։

Մոտեցան սեղանին, հաց կերան պրծան, ղայֆեքը խմեցին ու Ղըլտճին հարցրավ.— Ի՞նչ ես ուզում ինձնեն։

Նա թե.— Ես քեզնեն ոչինչ չեմ ուզի, միայն թե ասա՝ ի՞նչ էր պատճառը, որ թուրը շինեցիր ու տվիր տիրոջը, նորեն ետ դառար, զարկիր ջարդեցիր։

Բարկացավ Ղըլտճին ու վիրավորված ըսավ.— Թե ես դիմանայի դու ինձ այդ պտի հարցնեիր, թուրը ոչ թե օրսին կզարկեի, այլ քեզի մեջտեղից կես կանեի, իմ դարդերս իրար չէիր տա, համա որ երդվել եմ, պետք է ասեմ, դեհ ականջ արա Ահմատ աղա.

— Ես բինալու Ղարսրցի մե նախրճու տղա էի, էղավ որ հերս

ինձի նշանեց, կարգեց, մեկ տարի մնացի հորս քովը ու հետո բաժնվավ։ Ղրաղ տեղ մարագմ ունեինք։ Գնացինք էդ մարագը կենալու ես ու նշանածս։ Ապրուստ որ չունեինք՝ նշանածիս ասի, դու այստեղ կեցի, ես ուրիշ քաղաք էրթամ աշխատելու, համա դու պտի ուրիշ տեղ չէրթաս ու պարկեշտ պտի մնաս մինչև իմ գալս, պատվիրեցի ու ես գնացի։ Գնացի Ստանրոլու քաղաքը, մտա մե թուր շինողի քով, հինգ տարի ծառայեցի ու թուր շինելը լավ սորվավ։ Հինգ տարուց հետո թալլալը ճվաց թե. «Տիրությանը ձիավոր մարդ է հարկավոր, ով որ եկավ, բավականի տոնլուղ կա», ես էլ տեսա որ մեշը օգուտ կա, գրվա դալիբաշի, հինգ տարի էլ մնացի այդտեղ՝ էղավ տասը տարի։ Մեկ օր էլ թալլալը ճվաց թե. «Ով որ էրթա Արղրում՝ այլողը երկու անգամ ավել կուտանա», ես էլ ասի, որ կէրթամ ու գնացի Արղրում։ Տասը տարի էլ այնտեղ կեցա՝ էղավ 20 տարի։ Նորեն թալլալը ճվաց թե. «Ով որ գնաց Ղարս՝ այնտեղ ավելի շատ ռոճիկ կառնի», ըսի, ես կէրթամ ու եկա Ղարս, իմ հայրենիքս։

Ղարս որ եկա, ինձի մարդ չէր ճանչընա. ո՞վ գիտեր, թե էն նախըրճու տղեն եմ, քանի որ 20 տարի տիրության ղուլուղի մեջ էի։ Ես ելա ման գալով գնացի դեպի մեր տների սամթը, գնացի տեսա էն մարագի մեջը, որ կնիկս թողել էի, տեսա որ մարագի տեղը ղոճա քոշկ ու սարահներ են շինել,— վա՜յ,— ըսի իմ մեջս թե,— դու իմ պատվերս չես պահել, ծուռը ճանփա էրթալով ես էս տները շինել, յավաշ մութն ընկնի տեսնիմ էսոր տունը մտնող էլնող կա՞։

Հ'իրիկունն օր մարդկանց ձեռը ու ոտը քաշվավ, գնացի փանջարեցեն աշի, որ մեկ շահել շիվան երիտասարդմ կնկաս հետ կերան, խմեցին ու մտան իրար ծոց քնան, մտքումս ասի՝ ես ֆլան դալիբաշին էղնիմ ու էդ բանը ես ղաբուլ անե՞մ։ Քաղաքը որ բոլորը քուն մտան, մտա ներս՝ երկուսին էլ մորթեցի տեղի մեշնուն, ելա գնացի իմ տեղս քնա։ Առավոտյան ելա գնացի դեպի ղայֆեն, տեսա, որ մարդիկ իրար հետ խոսում վշվշում ու ափսոսում են։ Մոտեցա հարցրի, թե՝ եղբայր էդ ինչո՞ւ վրա եք խոսում, նրանք էլ էս պատասխանեցին թե. «էստից մեկ 20 տարի հ'առաջ մեկ նախրճում տղա հորեն բաժնվավ, թաժա պսակված կինը բերավ մեկ մարագմ գրավ ու ինքը գնաց կորավ. դրա գնալուց հետո կնոջը մեկ տղեմ էղավ, էնքան լավն էր, երբ որ մենծացավ՝ շատ խոնարհ, խելոք աշխատասեր մարդ դարձավ, բավականին փող աշխատեց, լավ լավ տուներ շինեց, մոր հետ շատ շատ երջանիկ կապրեին, էս գիշեր ո՞ր անաստված, անխիղճ իթողլիթը մտել է նես, համ մորն է մորթել, համ տղին»։

Էդ խոսքերն որ լսեցի ասի, որ,— ձեր ասած անաստվածն էլ, անհոգին էլ, մարդասպանն էլ ես եմ, ես, իմ մատս տարա իմ ձեռքովս իմ աչքս հանեցի։ Հիմի որ ես թուրը ետ կառնիմ նորեն տշելու, կմտածեմ, որ ես իմ կինս ու տղես այս թրովը սպանեցի, հերսս գելնի ու թուրը ետ կառնիմ ու կ'ջարդեմ։ Ահան թուր ջարգելու պատճառը էս է, ով որ քեզի ղրկել է, խաբարը ս.ար։

Ահմատը մնաս բարով ասավ Ղըլտճուն ու գնաց հեծավ ձին, գնաց հասավ Դունյագոզալու քաղաքը։ Ձին տվավ օդաբաշուն, ինքը գնաց խաբար տանելու։ Ահմատը բարև տվավ Դունյագոզալուն ու պատմեց այնպես Ղըլտճու խոսքերը, ինչպես որ լսել էր։

Իսկ նա ասաց.— Նրանք իրարուց ինչ լազաթ առան, որ մենք իրար առնինք ինչ լազաթ ունենա։

Ահմատը ասավ.— Դու ինձի երեք տեղն էլ ղրկիր, որ մեկ վնասիմ հանդիպիմ, ետ չգամ, համա աստված ինձի պահեց, դու իմ ղսմաթս ես, պտի առնիմ որ առնիմ։

Դունյագոզալին ասավ.— Տղա, սուտը հատավ, ես էլ քեզի կառնիմ։

Ահմատը ասավ.— Դեհ, պատրաստություն տես, որ էրթանք իմ հայրենիքս։

Պատրաստվեցան ու ընկան ճանփա։ Շատ գնացին թե քիչ, աստված գիտե, հասան այն չորնի քովը, որ Ահմատին հաց էր տվել, կանչեց չորանին մե բուռմ ոսկի տվեց ու ասաց.— Գնա հորս ասա, թե քո այն կորած տղեդ գուքա։

Չորանն ասավ.— Ահմատ աղա, հիմա կառնիմ ոսկիդ, դու թաք գնացիր, ջուխտ էկար,— ու վազեց դեպի քաղաքը թագավորին իմաց տալու, թե՝ քու կորած տղեդ գալիս է։

Թագավորը, երբ որ լսեց, շատ ուրախացավ, չորանին բավականին ոսկի տվավ, հրամայեց՝ կառետներ լծել։ Ձորքը հավաքվավ ու ընկան ճանփա, գնացին հասան տղին։ Երբ որ տղեն հորը տեսավ, որ գալիս է, հարսի հետ իջան կառքեն ու եկան դեպի թագավորը, բարևեցին, ձեռը համբուրեցին։ Թագավորը համբուրեց տղին ու հարսին ու նստացրավ իրա կառքին, եկան դեպի տուն։ Հարսնիք արին քառասուն օր, զոր գիշեր կերան, խմեցին, հարսնքի դերը կատարեցին։

Էդոնք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրազին։

Երկնքեն երեք խնձոր ընկավ, մեկը՝ ասողին, մեկը՝ գրողին, մեկն էլ լսողին։